Տ. ՍՏԵՓԱՆՈՍ ՔԱՀԱՆԱ ՏԻՆԿԻԼՅԱՆ

Ծնվել է 1954 թ. դեկտեմբերի 19-ին Ալեքսանդրիա քաղաքում (Եգիպտոս):

1969 թ. ընտանիքով գաղթել են Ամերիկայի Միացյալ Նահանգներ, որտեղ ստացել է քիմիայի ճյուղով ինժեների մասնագիտություն:



Տասներկու տարի աշխատելով իբրև ինժեներական գրասենյակի տնօրեն, 1986 թ. ընդունվել է Նյու Յորքի Ս. Ներսես ճեմարան:

1989 թ. Նյու Յորքի Ս. Ներսես և Ս. Վլադիմիր դպրեվանքերից ստացել է մագիստրոսի աստիճան:

Սույն թվականին եկել է Հայաստան՝ խորացնելու իր գիտելիքները Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի պատմության վերաբերյալ:

1989—1991 թթ. Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանում դասավանդել է Ս. Գիրք, միևնույն ժամանակ քարոզչական գործունեություն ծավալել տարբեր ուսումնական հաստատություններում:

1889 թ. դեկտեմբերի 25-ին, ձեռամբ գերշ. Տ. Անանիա եպս. Արաբաջյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1991 թ. հունիսի 4-ին Ս. Գայանե վանքում, ձեռամբ գերշ. Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանի, ձեռնադրվել է քահանա:

Շուտով արժանապատիվ տեր հայրը կվերադառնա Միացյալ Նահանգներ և կպաշտոնավարի Լոս Անջելեսի հայ համայնքում;